ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/44

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ի տնօրեն Բ. Լևոնյանի (պետական գրանցման համար՝ 52.110.880920),

«ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Թաշչյանի (լիազորագիր՝ տրված 01.06.2022թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կահույքի պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ի կողմից 02.06.2022թ. ներկայացված (03.06.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/40 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 02.06.2022թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կահույքի պատրաստման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցում:

Ընթացակարգը կազմակերպված է եղել հայտի ապահովման ներկայացման պահանջով, համաձայն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 7-րդ կետի, հարկ եմ համարում նշել, որ «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերությունը հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով և հետագա մասնակցությունից հրաժարվելը խելամիտ քայլ չէր լինի:

7.3 Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է սույն ընթացակարգի հետագա մասնակցությունից:

7.4 Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Սույն թվականի մայիսի 17-ին ժամը 10:59-ին «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերության կողմից համակարգին է կցվել կանխիկ փողի ձևով վճարված հանձնարարականը/հայտի ապահովում/ և գնային առաջարկի ֆայլը առանց Էլ. ստորագրության հաստատման, տեխնիկական պատճառներով չենք կարողացել կցել մյուս փաստաթղթերը:

Հանձնաժողովը մայիսի 24-ի թիվ 3 արձանագրության 2.3 կետով արձանագրել է հայտում առկա անհամապատասխանությունները և նույն օրը 16:25-ին armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցումով քարտուղարը ներկայացրել է «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերությանը, որ սահմանված ժամկետում շտկեն արձանագրված անհամատասխանությունները:

«ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերության համապատասխան մասնագետը ով պետք է հետևեր տվյալ ընթացակագրի հետ կապված հարցերին առողջական խնդիրների պատճառով /բժշկական

տեղեկանքը կցվում է/ անաշխատունակ է եղել, և միայն 26.05.2022 թվականին է կարողացել ստուգել համապատասխան էլեկտրոնային փոտին եկած նամակները, հայտնում ենք, որ այս մասով «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերության և Անի Թաշչյանի միջև 2022 թվականի մայիսի 15-ին կնքված պայմանագրի համաձայն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով գնման ընթացակարգի մրցույթի հայտի պատրաստման և armeps համակարգով հայտի ներկայացման, ներկայացված հայտում անհամապատասխանությունների շտկման, ինչպես նաև սույն ընթացակարգի շրջանակներում նախատեսված այլ պարտավորությունների մասով պատասխանատու է Անի Թաշչյանը/կից ներկայացվում է պայմանագիրը/:

26.05.2022 թվականին «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերության համապատասխան մասնագետը վաղ առավոտյան բանավոր ձևով թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման գնումների համակարգողին ներկայացրել է եղելությունը խնդրելով որ ընդառաջեն հիվանդության փաստը հաշվի առնելով, սակայն գնումների համակարգողի կողմից ստացել է մերժում, վերջինս նշել է որ իրենից ոչինչ կախված չի հաշվի կառներ հիվանդության հանգամանքը եթե օրենքը թույլ տար, այնուամենայնիվ նույն օրը սույն ընթացակարգի հրավերում նշված էլ. հասցեին «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերության համապատասխան մասնագետը ուղարկել է շտկված փաստաթղթերը: Նույն օրը ժամը 13:38 ոչ ավտոմատ ծանուցումով armeps համակարգի կողմից ստացել ենք մերժման ծանուցում: Հատկանշական է այն, որ «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերությունը չի հրաժարվել հետագա մասնակցությունից և հաղթելու ակնկալիքից, դա վկայում է նաև կանխիկ փողի ձևով ներկայացրած հայտի ապահովումը/հիմքերը կցվում են/:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերությունը մասնակցել է մի շարք այլ ընթացակարգերի և ոչ մի խախտում չի իրականացրել, մասնավորապես ունի ամբողջությամբ իր առջև դրված ողջ ծավալով պարտավորությունները կատարված պայմանագրեր, կնքված և դեռ ընթացքում գտնվող պայմանագրեր և այլն /ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/4, «Թ12ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-22/7», ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-22/04, ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/27-1 և այլն/:

Բողոքի իրավական հիմքերն ու հիմնավորումները

Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված (ներկայացվում է ստորև)՝

«Հոդված 3. Օրենքի նպատակը, սկզբունքները և գործողության ոլորտը

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

3. Սույն օրենքի իմաստով՝ գնումը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարվող, եթե պայմանագիրը կնքվում և դրա շրջանակում ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը ձեռք են բերվում ու օգտագործվում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

4. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում գործարքների հետևյալ տեսակների վրա.

1) աշխատանքային պայմանագրեր.

2) օրենքով նախատեսված դեպքերում քրեական, վարչական կամ դատական վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց որոշումներով նախատեսված կոնկրետ անձանց կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերում»

Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված (ներկայացվում է ստորև)՝

«Հոդված 7. Գնումներին մասնակցելու հավասարությունը

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասը չի կիրառվում, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է, որ հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ընդ որում, հայտարարությունը ենթակա չէ փոփոխման: Եթե կիրառվում է սույն հոդվածի 2-րդ մասը, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է այդ սահմանափակման մասին:

4. Արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

2) սույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մասնակցության դեպքերի:

5. Պատվիրատուի մասնակցությամբ իրավաբանական անձինք գնումներին մասնակցում են այլ մասնակիցների հետ հավասար իրավունքով, և այդ կազմակերպություններում պատվիրատուի մասնակցության հանգամանքը չի կարող հանգեցնել այդ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը»:

Գնումների կազմակերպման կարգի 41-րդ կետ (ներկայացվում է ստորև)՝

«41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև

կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:»

Գնումների կազմակերպման կարգի 42-րդ կետ (ներկայացվում է ստորև)

«42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի պահանջներով խնդրում եմ՝

1. սույն բողոքը ընդունել վարույթ
2. Պարտավորեցնել հանձնաժողովին դադարեցնել 24.05.2022 թվականի թիվ 3 արձանագրությամբ «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:
3. Պարտավորեցնել հանձնաժողովին ընդունել «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերությանը անհամապատասխանությունների շտկման մասով նոր ծանուցում ներկայացնելու մասին որոշում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.06.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրեը ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ԳԲՔԱ-ՆԳ-2022/44 բողոքի վերաբերյալ 07.06.2022թ. ՊՆ/02/2720-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր ԲՔԱ-ԳՆ/10288-2022 գրության հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից): Հայտերի գնահատման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի ներկայացրած հայտում արձանագրվել է անհամապատասխանություններ՝ հայտում բացակայում է վերոնշյալ ընթացակարգի հրավերով նախատեսված Հավելված 1-ը և այդ հավելվածում կայքէջի հղման բացակայության դեպքում նաև հրավերով նախատեսված իրական շահառունելի վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.3-ը, և եթե կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն, ապա հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը պետք է հաստատված լինեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, համաձայն ՀՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի և վերոնշյալ ընթացակարգի հրավերի 8.18-կետի:

ՈՒստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 24.05.2022թ. ծանուցել վերոնշյալ մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները և 26.05.2022թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ի հայտը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ «ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.06.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

3. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2022/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ընթացակարգի հրավերով նախատեսված Հավելված 1-ը և այդ հավելվածում կայքէջի հղման բացակայության դեպքում նաև հրավերով նախատեսված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.3-ը, և եթե կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն, ապա հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը պետք է հաստատված լինեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի և վերոնշյալ ընթացակարգի հրավերի 8.18-կետի:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 24.05.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 26.05.2022թ. հրավիրված նիստի ընթացքում արձանագրել է, որ «Բի Էլ» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Բի Էլ» ՍՊԸ-ի 02.06.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ԳԲՔԱ-ՆԳ-2022/44 բողոքի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման

բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «ԲԻ ԷԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ընթացակարգի հրավերով նախատեսված Հավելված 1-ը և այդ հավելվածում կայքէջի հղման բացակայության դեպքում նաև հրավերով նախատեսված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.3-ը, և եթե կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն, ապա հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը պետք է հաստատված լինեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի և վերոնշյալ ընթացակարգի հրավերի 8.18-կետի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 24.05.2022թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 26.05.2022թ. հրավիրված նիստի ընթացքում արձանագրել է, որ «Բի Էլ» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպսիով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է, որ 2022 թվականի մայիսի 24-ին ժամը 16:25-ին armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցումով «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերության tender.22.at@gmail.com էլ. հասցեին ներկայացվել է անհամապատասխանության շտկման ծանուցում, որը «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերության համապատասխան փաստաթղթերը ներկայացնող մասնագետի՝ Անի

Թաշչյանի անաշխատունակության մեջ գտնվելու հանգամանքով պայմանավորված ներկայացվել է սահմանված ժամկետից ուշ:

Ի հավաստումն վերոգրյալի՝ Ընկերությունը ներկայացրել է Անի Թաշչյանի անաշխատունակության թերթիկը, տրված 24.05.2022թ. (սերիա՝ BB N 051767, սկիզբը՝ 24.05.2022թ., վերջը՝ 27.05.2022թ.), ինչպես նաև քաղվածք մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտից:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է «Բի Էլ» ՍՊԸ-ի և Անի Թաշչյանի միջև 15.05.2022թ. կնքված ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը, որի 1-ին կետի համաձայն՝ Կատարողը (տվյալ դեպքում՝ Անի Թաշչյանը) պարտավորվում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով գնման ընթացակարգի համար armeps համակարգով ներկայացնել հայտ, հետևել tender.22.at@gmail.com էլ. հասցեին ստացվող սույն ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող բոլոր փաստաթղթերին, պատասխանել հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկմանը, կազմել «Բի Էլ» ՍՊԸ-ի տնօրենի հաստատմանը ներկայացնել Պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները և սույն ընթացակարգի շրջանակներում նախատեսված այլ պարտավորություններ:

Այսպիսով՝ սույն գործի փաստերի համաձայն՝ արձանագրում եմ, որ 24.05.2022թ. ծանուցված լինելու պայմաններում մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված ահնահամապատասխանությունները չշտկելը պայմանավորված է եղել «ԲԻ ԷԼ» ՍՊ ընկերության համապատասխան փաստաթղթերը ներկայացնող մասնագետի՝ Անի Թաշչյանի անաշխատունակության մեջ գտնվելու հանգամանքով, որպիսի պայմաններում գտնում եմ, որ պետք է դադարեցնել Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Բի Էլ» ՍՊԸ-ի կողմից 02.06.2022թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 24.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «ԲԻ Էլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. ընդունել «ԲԻ Էլ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման մասով նոր ծանուցում ներկայացնելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**